և զանազան բարեպատեհ առիթներով նուիրուելիք գրամներն, և տարին անգամ մը գանձանակը) ղրկուելով Հիւանդանոցի գրասենեակը, հոն պիտի բացուի, և պարունակած գումարը պիտի ծանուցուի լրագրաց մէջ։ Այս գանձանակներ գեղակերտ սիրուն առարկաներ են և տան սալոնին մէջ իրրև զարդ կրնան գրուիլ։ Առ այժմ՝ 1,000 գանձանակ պատրաստուած է, և վստահ ենք թէ միջին հաշիւով իւրաքանչիւր գանձանակ մէկ ոսկի կրնայ արտադրել տարին։

— Ս. Պատրիարքը դիմումի ըրած է առ որ անկ է, որ պետական վարժարանաց մէջ նոր Հայ ուսանողներ ընդունուին։ Սոյն խնդիր նկատողութեան առնուած և պարտ ու պատշաճը տնօրինել խոստացուած է։

— Արարկիրի Առաջն. Տեղապահ Տ. Մուշեղ Ծ. Վ. Պատրիարքարան նամակ մը ուղղելով՝ կը ծանուցանէ տեղական Որբանոցին բացումը, շրջակայ տեղերէ որբեր հաւաքելն ալն.։ և այս առթիւ Ս. Պատրիարքէն նպաստի նախնական գումար մը կը խնդրէ։ Ն. Սրբազնութիւնը ղրկեց որոշեալ նպաստը սոյն նորահաստատ Որբանոցին։

— Խարբերդի Առաջնորդ Տ. Պետրոս Ծ. Վ. Բագրատունի ևս նամակ մ՚ուղղելով ի Պատրիարքարան՝ կաւետէ Խուլէ—Վանքին մէջ հաստատուած Որբանոցին բացումը, և այս առթիւ կենդրէ Ն. Սրբազնութենէն ղրկել կանխաւ խոստացուած ամսական 15-ական ոսկին։ Ս. Պատրիարքը պարտ ու պատշաճը տնօրինեց ի քաջալերութիւն։

— Բաղէշէ Տ. Ղևոնդ քհնյ. Ցարութիւնեան կգրէ՝ գովելով տեղւոյն նորահաստատ բողոքական Որբանոցին Տեսչութիւնն, որ Ս. Պատրիարք Հօր պատուէրին ու բաղձանքին համաձայն կը շարժի, որբերը կանոնաւորապէս եկեղեցի ղրկելով ամէն կիրակի և տօն օրեր՝ կրօնական ամէն պարտաւորութիւնները կատարել տալով Ազգ. Եկեղեցւոյ ծոցին մէջ՝ և կընդունի Հայ կրօնուսոյց Որբանոցին մէջ։ Առաջ ազգ. վարժարանի դասատու Մելքոն էֆ. Քաջերունի շարաթն անգամ մը կերթար կրօնագիտութեան դաս տալու որբերուն։ Հիմակ ինք նամակագիր քահանան կերթայ՝ և ջերմ ընդունելութիւն կգտնէ թէ Տեսչութենէն և թէ աշակերտներէն։

— Վանայ գաւառական Խառն ժողովն և Առաջն. Տեղապահ Աղազատեան Տ. Ստեփան Ծ. Վ. ընդարձակ տեղեկագիր մը ղրկած են ի Պատրիարքարան՝ Աղթամարայ կաթուղիկոսական թեմերուն նկատմամբ՝ որով ի մէջ այլոց՝ Աղթամարայ թեմին մէջ գտնուող 25-ի չափ վանօրէից տխուր վիճակը՝ ժողովրդեան կարօտութիւնն, Աղթամարայ Աթոռին անշուք կացութիւնն, և հետզհետէ թափուր և աւերման վիճակի ենթարկուիլը շեշտելով՝ խնդրած են Կենդ. Վարչութենէն՝ որ հաճի Աղթամարայ Աթոռոյն համար ընտրել տեղւոյն բարքն ու դիրքն ուսումնասիրած՝ ժողովրդեան լեզուին գիտակ՝ և կառավարութեան ու ազգին համակրութիւնը վայելող բարձրաստիճան եկեղեցական մը։

— 8 փետր. Օրթա գիւղի եկեղեցւոյն մէջ քարոզիչ Տ. Վահրամ Եպիսկ. Մանկունի քահանայ ձեռնադրեց Երրանոսեան Գրիգոր և Աւետիս սարկաւագները։ Գրիգոր կոչուեցաւ Տ. Գէորգ աբեղայ՝ և Աւետիս Տ. Ղևոնդ քահանայ։ Խարտաւիլակութիւնը կատարեց աւագերէց Տ. Սահակ Հայր՝ Տ. Վահրամ Եպիսկ. պատարագ մատոյց և քարոզ խօսեցաւ քահանայական պաշտօնի վերայ։ Այս առթիւ յիշեց Էջմիածնայ Գէորգեան ճեմարանն և Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանին և անոնցմէ ելած կղերականները։ Երէկ իրիկուն ալ հանդիսաւոր կերպով վեղար տուաւ Տ. Գէորգ աբեղայի՝ որ Գէորգեան ճեմարանի շրջանաւարտներէն է։

«Բիւզանդիոն»։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

ՔԱՂՔԻԱԾ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀՀՕՓԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն տիկին Անանայի Աթամանեանց Բաղուեցւոյ՝ սակս նուիրաբերութեան 700 բուբլոյ՝ ի տրամադրութիւն Վեհ. Հայրապետի ազգիս. թ. 184։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն պարոնայց եղբարց Թումանեանց Դավիթեցւոց՝ վաճառականաց ի Բաղու՝ սակս նուիրաբերութեան մի հազար բուբլեաց ի տրամադրութիւն Վեհ Հայրապետի ազգիս. թ. 191։

— Ցանուն սինոդի ս. Էջմիածնի առ ի

յերդումն մատուցանել զԳէորգ Ծ. վարդապետն Երիցեան, վասն ընդունելոյ նորա զաստիճան եպիսկոպոսութեան. Թ. 233։

— Ցանուն Տ. Գէորգ Նորապսակ եպիսկոպոսի Երիցեան՝ լինել նմա ի վկայութիւն և յաղդարարումն վսեմական պարտուց նորին. Թ. 240։

— Ցանուն նորին Տ. Գէորգ եպիսկոպոսի, որով շնորհեցաւ նմա պանակէ եպիսկոպոսական. Թ. 241։

— Ցանուն Ամեն. Տ. Ցարութիւն Պատրիարքին ս. Երուսաղեմի, որով յայտ առնէ զձեռնադրութիւն Տ. Գէորգ եպիսկոպոսի. Թ. 242

— Ցանուն Ամեն. Տ Մաղաքիա Պատրիարքին Կ. Պոլսոյ, որով յայտ առնէ զձեռնադրութիւն Տ. Գէորգ եպիսկոպոսի և զառաքումն ս. միւռոնի ի ձեռն նորին, պէտս եկեղեցեաց Հայոց ի սահմանս Տաճկաստանի. Թ. 243։

— Ցանուն Տ. Կարապետ վարդապետի՝ Տեսչի Ժառանգաւորաց Ուսումնարանին Երուսաղեմի, որով շնորհեցաւ նմա Լանջախաչ վարդապետական ականակուռ. Թ.244։

— Ցանուն Եղեկիել վարդապետի Առաջ. Տեղապահի վիճ. Տիգրանակերտի, որով շնորհեցաւ նմա լանջախաչ վարդապետական ականակուռ. Թ. 245։

— Ցանուն Տ. Մաշատուր քահանայի Տ. Գաբրիէլեան Մայր եկեղեցւոյ Կ. Պոլսոյ, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական. Թ. 246։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն պ. Ստեփանայ Աստուածատուրեան Պարսկաստանցւոյ, վասն պատսպարելոյ և ինամելոյ նորա զմերազդիս՝ գաղթեալս ի սահմանս Պարսկաստանի. Թ. 260։

— Ցանուն Տ. Յովհան վարդապետի Բաղդասարեան՝ վասն գնալոյ նորա ի դիւղն ի Մատարայ և բաժանելոյ ցորեան չքաւոր ընտանեաց ի շահմարանէ Մ. Աթոռոյ, այլ և քարոզելոյ ի գիւղօրայս վիճ. Ալէքսանդրապօլու յընթացս մեծի պահոց. Թ. 298։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն պ. Սողոմոնի Դալսաեան Գօրեցւոյ՝ վասն նորեգելոյն նորա զքարաշէն բեմն ս. Ստեփաննոս եկեղեցւոյ տեղւոյն. Թ. 302։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն պ. Գէորգայ՝ նոյն և Յովսէփայ Տ. Պետրոսեան Գօրեցւոյ, վասն նորոգելոյ նորա զքանդակատուն հնաշէն ս. Ստեփաննոս եկեղեցւոյ տեղւոյն (Գօրի). Թ. 303։

— Ցանուն Ստեփաննոս քահանայի Մոյսեան Ռոման քաղաքի Ռումանիոյ, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական. Թ. 309։

— Ցանուն Տ. Կարապետ ա. քահանայի Պոյաճեան՝ Ռուսճուկ քաղաքի Պուլկարիոյ, որով շնորհեցաւ նմա լանջախաչ վարդապետական ականակուռ. Թ. 310։

— Ցանուն ս. սինոդի, որով պատուիրի կարդել զՏէր Վահրամ վարդապետ Սլկունի ի վանահայր Այրի վանուց (Գեղարդ). Թ. 313։

— Ցանուն Հոգ. Կառավարութեան Հայոց Ալէքսանդրապօլու, որով պատուիրի տալ զպաղի ցորեանն վիճակին Տ. Թովմա վարդապետի, վասն բաշխելոյ չքաւորաց Մատարայ վանքապատկան գեղջ. Թ. 320։

— Ցանուն Ամեն. պատրիարքի Կ. Պոլսոյ Տ. Մաղաքիա արքեպիսկոպոսի, որով թոյլատրի երկրորդ ամուսնութիւն Յովհաննէսի Ասլանեան Արաբկիրցւոյ, ի Նեբելի աւուրս հարսանեաց. Թ. 326։

— Ցանուն նորին Տ. Մաղաքիա Պատ-

բիարքի, որով մերժեցաւ լուծումն պսակի Յովիկ Գարագէօզեանի ընդ կին իւր, զի չէք ինչ առիթ անհրաժեշտ լուծման։ Թ. 327։

— Ցանուն Սիօն վարդապետի, վասն գնալոյ նորա առ ի քարոզել յընթացս մեծի պահոց ի կողմանս Սուրմալուայ և Սարդարապատի։ Թ. 335։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն պարոնայց եղբարց Նաբաթեանց Գանձակեցւոյ, վասն հիւրասիրելոյ նոցա զՆորին Վեհափառութիւն ի տան իւրեանց և նուիրելոյ ի տրամադրութիւն Նորին Սրբութեան երկու հազար ռուբլիս։ Թ. 349։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն պ. Յովսէփայ Կարապետեան Թումայեանց Բազուեցւոյ, վասն նուիրելոյ նորա մի հազար ռուբլի ի տրամադրութիւն Նորին Սրբութեան։ Թ. 351։

— Օրհնութեան և քաջալերութեան յանուն հոգաբարձուաց ժառանգաւորաց որբանոցին Վարագայ Վանուց, որ ի Վան։ Թ. 379։



ԲԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

9 փետր. Երևանի կոնսիստորիայի 1897 թ. 4572 գրութեամբ Սինօդին ներկայացրած թ. 175/90 դրծից երևում է, որ Դէօղալ Գրիգորեանցին խարէութեամբ պատկել են 60 տարեկան Նազար Սարգսեանի հետ։ Սինօդը վճռեց պատուիրել Երևանայ կոնսիստորիային՝ յանցաւորներին Երևանի Նահանգական դատարանի պ. պրոկուրորի միջոցով՝ ըստ զօրութեան 297 յօդ. քրէական դատաստանի ենթարկել։

25 փետր. Սինօդը վճռեց հրամայել Տփխիսի կոնսիստորիային դատի ենթարկել Ներսէս քհ. Ղամազեանին՝ ըստ զօրութեան պատժ. օր. 282 և 940 յօդ.։

4 մարտ. Սինօդը վճռեց հրամայել Ասարխանի կոնսիստորիային մահմեդական Սաբերջան Ռենիզու Զուրմանտիին մկրտութեամբ ընդունել Հայոց եկեղեցու ծոցը։

6 մարտ. Սինօդը լսելով Ասարխանի կոնսիստորիայի թ. 84 յայտարարութիւնը, որով նոյն թեմի առաջնորդը խնդրում է Սինօդի թոյլատրութիւնը Ասարխանում մոմի գործարան բանալու համար, վճռեց մերժել առաջնորդի խնդիրը։

6 մարտ. Ըստ բարեհաճ կամաց Վեհափառ Հայրապետի Սինօդը յայտնեց Երևանի նահանգական դատարանի նախագահին, որ Մայր Աթոռի հոգևոր ճեմարանը համաձայն չէ թոյլ տալ, Վիեննայում վախճանուած ռուսահպատակ Կոստանդին Վարշամեանի յանուն ճեմարանի կտակած գումարից ուրիշներին մաս հանելու, այլ ցանկանում է հանդուցեալի կտակը ի կատար ածուած տեսնել իսկութեամբ։

13 մարտ. Սինօդը 1890 թ. 2110 և 2145 գրութիւններով դիմել էր Ներքին գործոց նախարարութեանը և միջնորդել վարձատրելու Հին Ղրիմի Ս. Աստուածածին եկեղեցու երեցփոխան Կարապետ Յովհաննիսեան Բէզարեանցին և Նոր Նախիջևանի Ս. Թէոդորոս եկեղեցու երեցփոխան Մկրտիչ Քրիստափորեան Սաղերեանցին՝ նոցա ինքնամեայ հաւատարիմ և շահաւէտ ծառայութեան համար։ Արդ. Օտար գաւանութեանց հոգևոր գործոց գեղարատամենաը իւր թ. 715 գրութեամբ յայտնում է Սինօդին, որ Թագաւոր Կայսրը ամենաողորմածարար շնորհել է Մկրտիչ Սաղերեանին մի ոսկէ մէդալ ս-